# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1. Հեռ. (0253) 2-41-00
Էլ. փոստ՝ alaverdi.lori@mta.gov.am

N 597
*02 մայիս 2017թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Նալբանդյան.

Ձեզ ենք ուղարկում Ալավերդի համայնքի ղեկավարի 2017թ. N 157-Ա -N 158-Ա որոշումները:

Առդիր՝ 2 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Էվոյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2017 թվականի N 157-Ա

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28.02.2017Թ. N 88-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 3) ենթակետով, հիմք ընդունելով քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը *որոշում եմ՝*

Ալավերդի համայնքի ղեկավարի 28.02.2017թ. «Գյուղատնտեսական նշանակության հողամասերի հողհատկացման հիմքերը վերականգնելու, հողօգտագործման իրավունքը ձևակերպելու, Ալավերդի համայնքի ղեկավարի 25.04.2016թ. «Գյուղատնտեսական նշանակության հողամասերի հողհատկացման հիմքերը վերականգնելու, հողօգտագործման իրավունքը ձևակերպելու մասին» N 77-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 88-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ. «Վերականգնել Սանդրո Սերոբի Ռամազյանին (ծնված՝ 02.11.1955թ.), Օֆելյա Վազգենի Ռամազյանին (ծնված՝ 15.09.1956թ.), Սենիկ Սանդրոյի Ռամազյանին (ծնված՝ 01.03.1981թ.) բաժնային սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2017թ. ապրիլի 27
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԱՊՐԻԼԻ 2017 թվականի N 158-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Ռուբեն Գուրգենի Իսրայելյանի դիմումը, անձնագրի պատճենը, ժառանգության իրավունքի վկայագիրը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Սանահին Սարահարթ թաղամասի N 2/25 շենքի արևմտյան մասում գտնվող, Ռուբեն Գուրգենի Իսրայելյանին ժառանգության իրավունքով պատկանող ավտոտնակին տրամադրել Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/4-19/1 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2017թ. ապրիլի 28

ք. Ալավերդի